600.0398.02.12.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 դեկտեմբերի 2015 թվականի №398Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի №202Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետը, 2-րդ կետի «ժ» և «ժդ» ենթակետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ 2006 թվականի սեպտեմբերի 15-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №202Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածում՝ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության պայմաններում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունները.

1) Հավելվածը լրացնել N2 հավելվածով՝ համաձայն հավելվածի,

2) Հավելվածում «CDMA» բառը փոխարինել «անլար տեխնոլոգիա» բառերով,

3) Ուժը կորցրած ճանաչել Հավելվածի 3.1 կետի «ը» և «թ» ենթակետերը,

4) Հավելվածի 3.15 կետում «հավելվածի» բառը փոխարինել «N1 հավելվածի» բառերով,

5) Հավելվածի 3.25 կետում «հավելվածով սահմանված ցուցակում նշված» բառերը փոխարինել «N1 և N2 հավելվածներով սահմանված ցուցակներով նախատեսված» բառերով,

6) Հավելվածի 3.15 կետի համաձայն հաստատված հավելվածում «Հավելված» բառը փոխարինել «Հավելված N1» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ք. Երևան
2 դեկտեմբերի 2015 թ.
ժամը 16 ⁰⁰